Հավելված N 2
ՀՀ կառավարության 2026 թվականի
սեպտեմբերի 24-ի N 1391-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՈՐԴԵԳՐՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են որդեգրողի ընտանիքում որդեգրված երեխայի խնամքի նկատմամբ վերահսկողության նպատակը, իրականացման ձևերը, կազմակերպման և իրականացման փուլերը, տեխնիկական կանոնները, վերահսկողության ընթացքում անհրաժեշտ տեղեկությունների ձեռքբերման մեթոդները և վերահսկողությանն առնչվող այլ հարաբերություններ:

2. Որդեգրողի ընտանիքում որդեգրված երեխայի խնամքի նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է որդեգրման մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ երեք տարվա ընթացքում:

3. Վերահսկողություն իրականացնող մարմիններն են խնամակալության և հոգաբարձության մարմինը՝ ի դեմս երեխայի պաշտպանության ոլորտում մասնագիտացված սոցիալական աշխատողի (այսուհետ՝ մասնագիտացված սոցիալական աշխատող) և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը (այսուհետ՝ Կենտրոնական մարմին, այսուհետ միասին՝ վերահսկող մարմին)՝ վերահսկողության արդյունքների հիման վրա փաստաթղթեր ստեղծելով տեղեկատվական համակարգում:

4. Մասնագիտացված սոցիալական աշխատողը վերահսկողություն է իրականացնում՝

1) Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ընտանիքում որդեգրված երեխայի խնամքի նկատմամբ.

2) օտարերկրյա պետությունից Հայաստանի Հանրապետություն որդեգրված երեխայի խնամքի նկատմամբ.

3) օտարերկրացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, երկքաղաքացիների կողմից որդեգրված երեխայի խնամքի նկատմամբ, եթե վերահսկողության ժամանակահատվածում երեխան շարունակում է բնակվել կամ բնակություն է հաստատում Հայաստանի Հանրապետությունում:

5. Սույն կարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված վերահսկողության դեպքում՝ «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) շրջանակում Հայաստանի Հանրապետություն որդեգրված երեխայի խնամքի նկատմամբ վերահսկողության արդյունքով կազմված փաստաթուղթը տեղեկատվական համակարգով մասնագիտացված սոցիալական աշխատողը հասանելի է դարձնում Կենտրոնական մարմնին՝ համագործակից պետության կենտրոնական մարմնին փոխանցելու նպատակով:

6. Կենտրոնական մարմինը վերահսկողություն է իրականացնում օտարերկրացիների և Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, երկքաղաքացիների կողմից որդեգրման դեպքում, եթե որդեգրողի ընտանիքը գտնվում է Հայաստանի Հանրապետությունից դուրս.

1) Կոնվենցիայի շրջանակում որդեգրված երեխաների խնամքի նկատմամբ՝ օտարերկրյա պետության կենտրոնական մարմնի, հավատարմագրված կազմակերպության կամ դրա ներկայացուցչի կամ ներկայացուցչության հետ համագործակցության միջոցով հարցումների, տնայցերի կազմակերպման կամ օրենսդրությամբ նախատեսված այլ եղանակներով.

2) Կոնվենցիային չանդամակցող պետություն որդեգրված երեխայի որդեգրման դեպքում՝ այդ երեխայի կյանքի պայմանների վերաբերյալ տեղեկություններ հավաքելու նպատակով դիմելով համապատասխան պետության իրավասու մարմնին կամ որդեգրողներին, ինչպես նաև արտաքին գործերի նախարարության միջոցով Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություններին և հյուպատոսական հիմնարկներին՝ երեխայի կյանքի պայմանների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ ստանալու ուղղությամբ նստավայր պետությունում համապատասխան քայլեր ձեռնարկելու նպատակով:

7. Եթե որդեգրված երեխան տեղափոխվել է օտարերկրյա պետություն, ապա մասնագիտացված սոցիալական աշխատողի միջնորդության կամ հարցման դեպքում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից որդեգրված երեխայի խնամքի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Կենտրոնական մարմինը՝ օտարերկրյա պետությունից ստացված՝ երեխայի խնամքի իրականացման վերաբերյալ կազմված փաստաթղթերն ու տեղեկությունները փոխանցելով մասնագիտացված սոցիալական աշխատողին:

2. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՁԵՎԵՐԸ

8. Որդեգրողի ընտանիքում որդեգրված երեխայի խնամքի նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս մասնագիտացված սոցիալական աշխատողն իրավունք չունի կիրառել պատժողական որևէ մոտեցում: Մասնագիտացված սոցիալական աշխատողն ապահովում է մասնագիտական ծառայությունների տրամադրումն ընտանիքին՝ երեխային ընտանիքում ինտեգրելու, համակեցությունն ու համերաշխությունն ապահովելու, ընտանեկան միջավայր ձևավորելու, ինչպես նաև առաջացող սոցիալական խնդիրները կարգավորելու նպատակով:

9. Մասնագիտացված սոցիալական աշխատողն իր կողմից կիրառված աջակցության մասին տվյալները մուտքագրում է տեղեկատվական համակարգ:

10. Որդեգրված երեխայի բնակության վայրի փոփոխության դեպքում որդեգրողը պարտավոր է բնակության վայրի փոփոխությունից հետո՝ առնվազն մեկ ամսվա ընթացքում, տեղեկացնել նոր բնակության վայրի մասնագիտացված սոցիալական աշխատողին:

3. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

11. Վերահսկող մարմնի կողմից վերահսկողությունն իրականացվում է հանդիպումների, հարցազրույցների և այցելությունների միջոցով՝ ապահովելով որդեգրման գաղտնիությունը:

12. Որդեգրված երեխայի հետ հանդիպումներն ու հարցազրույցներն իրականացվում են հաշվի առնելով երեխայի՝ որդեգրման փաստի մասին իմացության կամ չիմացության փաստը:

13. Երեխայի՝ որդեգրման փաստի մասին իմացության կամ չիմացության փաստի մասին վերահսկող մարմինը տեղեկանում է որդեգրած անձից, իսկ իմացության մասին՝ նաև որդեգրված երեխայից:

14. Վերահսկող մարմինը տեղեկատվական համակարգի միջոցով նախնական պայմանավորվածություն է ձեռք բերում հանդիպումների, հարցազրույցների և այցելությունների ժամկետների մասին, եթե որդեգրողի կամ որդեգրված երեխայի հետ հանդիպումը, հարցազրույցի իրականացումը կամ որդեգրողի ընտանիք այցելությունը պայմանավորված չէ որդեգրված երեխայի կյանքը կամ առողջությունը վտանգող անմիջական սպառնալիքը կանխելու անհրաժեշտությամբ կամ որդեգրված երեխայի խնամքի և դաստիարակության վերաբերյալ ունեցած այնպիսի տեղեկություններով, որոնք ենթադրում են հրատապ միջամտություն և այդ ժամկետների վերաբերյալ նախնական պայմանավորվածության ձեռքբերումը չի խոչընդոտի որդեգրված երեխայի խնամքի և դաստիարակության վերաբերյալ տեղեկությունների ամբողջական և օբյեկտիվ կերպով ձեռքբերմանը:

15. Հանդիպումների, հարցազրույցների և այցելությունների նախնական պայմանավորվածություն ձեռք բերելու համար մասնագիտացված սոցիալական աշխատողը տեղեկատվական համակարգի միջոցով առաջարկում է հանդիպման, հարցազրույցի կամ այցելության երեք տարբերակներ՝ նշելով օրը և ժամը: Որդեգրած անձը պարտավոր է մեկ աշխատանքային օրվա ընթացքում ընտրել այդ երեք տարբերակներից մեկը և տեղեկատվական անհատական օգտահաշվի միջոցով ամրագրել այդ օրն ու ժամը:

16. Վերահսկող մարմինն առաջին այցելությունն իրականացնում է երեխային որդեգրելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսվա ընթացքում, դրանից հետո՝ առնվազն 6 ամիսը մեկ անգամ:

17. Վերահսկող մարմինը՝

1) սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի (այսուհետ՝ սեփականատեր) համաձայնությամբ մուտք է գործում երեխայի բնակության վայր.

2) ուսումնասիրում է երեխայի կենսապայմանները և դրանց ապահովվածությունը, տեղեկություն ստանալու երեխայի առողջության, ախտորոշիչ հետազոտությունների, ինչպես նաև նախասիրությունների, կրթության և այլ տվյալների մասին, անհրաժեշտության դեպքում՝ ստանում փաստաթղթերի պատճենները, երեխայի լուսանկարները.

3) անարգել շփվում է երեխայի և որդեգրած անձի, նրա ընտանիքի անդամների, ինչպես նաև մերձավոր ազգականների, հարևանների, կրթական, բժշկական կազմակերպությունների աշխատողների հետ՝ պահպանելով որդեգրման գաղտնիությունը.

4) կատարում է երեխայի լավագույն շահերից բխող՝ օրենքով նախատեսված այլ գործողություններ:

18. Որդեգրած ընտանիքի հետ այցելությունների փուլում նախատեսվում է հարցազրույցի և դիտարկման մեթոդներով պարզել՝

1) որդեգրած ընտանիքի բնակության վայրում կենցաղային պայմանների և կոմունալ-կենցաղային հարմարությունների հնարավոր փոփոխությունները, այդ թվում՝

ա. սանիտարահիգիենիկ պայմանները,

բ. բնակելի տարածքի չափը և սենյակների թիվը,

գ. ջրամատակարարման և ջրահեռացման, ջեռուցման, օդափոխման համակարգերի, սանհանգույցի առկայությունը և դրանց վիճակը.

2) որդեգրված երեխայի առողջական վիճակը, առողջապահական ծառայություններից օգտվելու մատչելիությունը, որդեգրված երեխայի բժշկական զննության պարբերականությունը, կանխարգելիչ պատվաստումների առկայությունը (անհրաժեշտության դեպքում), իսկ առողջական խնդիրներ ունեցող երեխաների դեպքում՝ նաև վերականգնողական, տեխնիկական միջոցների և այլ օժանդակ սարքերի ձեռքբերման խոչընդոտների առկայությունը.

3) որդեգրված երեխայի զարգացմանն ու կրթությանը վերաբերող տվյալները, այդ թվում՝ տարիքին և հասունության մակարդակին համապատասխան ուսումնական հաստատություններում ընդգրկված լինելու կամ չլինելու հանգամանքը, առաջադիմությունը, կրթություն ստանալու ընթացքում առաջացող հնարավոր խնդիրները, կրթություն ստանալու իրավունքի իրականացման մասին այլ անհրաժեշտ տեղեկություններ.

4) որդեգրած ընտանիքում տիրող միջանձնային հարաբերությունները, բարոյահոգեբանական մթնոլորտը, բռնությունների, որդեգրված երեխայի մոտ վարքային շեղումների առկայությունը և որդեգրված երեխայի պաշտպանվածության աստիճանը.

5) որդեգրած ընտանիքի բնակության վայրի փոփոխման դեպքում՝ նոր բնակության վայրի համապատասխանությունը երեխայի կարիքներին.

6) սոցիալական միջավայրում որդեգրված երեխայի ներգրավվածությունը՝ հարևանների, ընկերների հետ շփումների առկայությունը կամ դրանց բացակայությունը:

19. Վերահսկող մարմնի կողմից ամփոփվում են ձեռք բերված տեղեկությունները և դրանց հիման վրա, տեղեկատվական համակարգում վերահսկողական գործողություններն ավարտելուց անմիջապես հետո մեկ ժամվա ընթացքում կազմվում է վերահսկողության ընթացիկ արդյունքների վերաբերյալ արձանագրություն, որում հստակ նշվում են արձանագրության կազմման օրը և ժամը, բնակարանի գտնվելու վայրը, գործողություններին մասնակցած անձանց անունները, ազգանունները, պաշտոնները և իրականացված գործողությունները: Սույն կետում նշված արձանագրությունը ստորագրում են հանդիպում, հարցազրույց կամ այցելություն իրականացրած ծառայողը և որդեգրած անձը:

20. Արձանագրության հիման վրա որդեգրած անձին, նրա ամուսնուն կամ ընտանիքի անդամին, ըստ անհրաժեշտության, մասնագիտացված սոցիալական աշխատողը կարող է տրամադրել խորհրդատվություն և մեթոդական աջակցություն, որի ընթացքն ու արդյունքները լրացվում են տեղեկատվական համակարգում:

21. Սույն կարգի 19-րդ կետում նշված արձանագրությունը տեղեկատվական համակարգի միջոցով հասանելի է լինում որդեգրած անձին:

22. Որդեգրած ընտանիք այցելություններն իրականացվում են՝

1) սույն կարգի 16-րդ կետում նշված կարգավորումներին համապատասխան.

2) եթե այդպիսի խնդրանքով վերահսկող մարմին գրավոր դիմել է որդեգրած ծնողը կամ որդեգրված երեխան.

3) եթե առկա է ահազանգ որդեգրած ընտանիքում երեխայի իրավունքների խախտման, առողջական վիճակի վատթարացման, նրա խնամքի կամ դաստիարակության ոչ պատշաճ կատարման մասին.

4) եթե առկա են հիմնավոր պատճառներ որդեգրած ընտանիքում երեխայի վիճակը ռիսկային համարելու համար՝ երեխայի պաշտպանության դեպք վարելով:

23. Հանդիպումները, հարցազրույցները և այցելությունները կազմակերպվում են այնպես, որ որդեգրած ընտանիքը պաշտպանված լինի հանրային հետաքրքրությունից, բացառվի որդեգրման գաղտնիքի հրապարակումը և չառաջացնի հետաքրքրություն որդեգրած ընտանիքի բնակության վայրում՝ հարևանների, կրթական, բժշկական և այլ ծառայություններ մատուցող հաստատությունների կամ կազմակերպությունների ներկայացուցիչների մոտ:

24. Նախքան հանդիպումը, հարցազրույցը կամ այցելությունը սկսելը, վերահսկող մարմնի ներկայացուցիչը ներկայացնում է վկայական (պաշտոնական փաստաթուղթ):

25. Որդեգրած ծնողի և որդեգրված երեխայի հետ հանդիպումները և հարցազրույցները կարող են իրականացվել ինչպես որդեգրած ընտանիքի բնակության վայր կատարված այցելությունների ընթացքում, այնպես էլ նրանց փաստացի գտնվելու ցանկացած այլ վայրում:

26. Որդեգրած անձի և որդեգրված երեխայի հետ հանդիպումները և հարցազրույցներն իրականացվում են միմյանց ներկայությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ միմյանց ներկայությամբ հանդիպումը չի բխում երեխայի լավագույն շահերից:

4. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

27. Վերահսկողության ընթացքում անմիջական շփման փուլում անհրաժեշտ տեղեկությունները ձեռք են բերվում հարցազրույցի և դիտարկման մեթոդների կիրառմամբ:

28. Հարցազրույցի ընթացքում մասնագիտացված սոցիալական աշխատողը զրույց է իրականացնում որդեգրած ծնողի և որդեգրված երեխայի, իսկ անհրաժեշտության դեպքում նաև ընտանիքի այլ անդամների հետ՝ սահմանված տեղեկությունների ձեռքբերման համար, միաժամանակ ստուգվում է նաև ներկայացվող տվյալների համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով այլ մարմիններից կամ կազմակերպություններից ստացված տվյալներին:

29. Դիտարկման մեթոդով ճշտվում է, թե որքանով են որդեգրած ծնողի կամ որդեգրված երեխայի ներկայացրած տվյալները համապատասխանում իրականությանը, ինչպես նաև զննման և հետազոտման միջոցով ստացվում են անհրաժեշտ այնպիսի տեղեկություններ, որոնք չեն պարզվել կամ հնարավոր չէ դրանք պարզվել հարցազրույցի միջոցով:

5. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

30. Եթե վերահսկողության արդյունքում, վերահսկող մարմինը հայտնաբերում է երեխայի իրավունքների խախտում կամ որդեգրած ծնողը չի ապահովում որդեգրված երեխայի հիմնական պահանջմունքները, ներառյալ՝ սննդի, հագուստի, կոշիկի, հիգիենայի պարագաների, բնակության վայրի, բժշկական օգնության և սպասարկման, միջնակարգ կրթության, բնակարանային կոմունալ ծառայությունների, ապա վերահսկող մարմինը տրամադրում է 30 օր՝ բացահայտված թերությունները վերացնելու համար, բացառությամբ, եթե երեխայի կյանքին և առողջությանն անմիջական վտանգ է սպառնում:

31. Երեխայի կյանքի կամ առողջությանը վտանգ սպառնալու դեպքում երեխան անմիջապես վերցվում է ընտանիքից՝ Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 43-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն կազմակերպելով երեխայի այլընտրանքային խնամքը:

32. Սույն կարգի 30-րդ կետում նշված ժամկետում մասնագիտացված սոցիալական աշխատողն աջակցություն է տրամադրում ընտանիքին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ դիմում նաև ընտանիքի բնակության վայրի Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոն՝ օրենքով սահմանված սոցիալական աջակցություն տրամադրելու համար:

33. Եթե նույն ընտանիքում երկրորդ անգամ է հայտնաբերում երեխայի իրավունքների՝ սույն կարգի 30-րդ կետով նախատեսված խախտումներից մեկը, ապա վերահսկող մարմինը նախաձեռնում է ծնողական իրավունքների սահմանափակման գործընթաց:

34. Եթե վերահսկողության արդյունքում, վերահսկող մարմինը հայտնաբերում է երեխայի նկատմամբ բռնության դեպք կամ բռնության հիմնավոր կասկած, վերահսկող մարմինն անհապաղ, բայց ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում, տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանությանը (այսուհետ՝ Ոստիկանություն):

35. Եթե Ոստիկանությունը որդեգրած անձին «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքով սահմանված կարգով կանխարգելիչ հաշվառում է որպես ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձ, ապա մասնագիտացված սոցիալական աշխատողը որդեգրված երեխային վերցնում է որդեգրող ընտանիքից և նախաձեռնում է ծնողական իրավունքների սահմանափակման գործընթաց:

36. Եթե «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքով սահմանված կարգով Ոստիկանության կողմից կանխարգելիչ հաշվառվում է որպես ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձ որդեգրող անձանցից մեկը, ապա մասնագիտացված սոցիալական աշխատողը որդեգրված երեխային չի վերցնում որդեգրող ընտանիքից և կազմակերպում է որդեգրող մյուս ծնողի ու որդեգրված երեխայի պաշտպանություն՝ օրենքով սահմանված կարգով:

37. Եթե որդեգրող ծնողը որդեգրված երեխայի նկատմամբ կատարում է դիտավորյալ հանցագործություն, ապա որդեգրող ծնողի նկատմամբ մեղադրական դատավճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ յոթ աշխատանքային օրվա ընթացքում, մասնագիտացված սոցիալական աշխատողը դիմում է դատարան՝ դատապարտյալի կարգավիճակ ունեցող՝ որդեգրած անձի կողմից՝ հաստատված որդեգրման վերացման հայցով:

38. Եթե որդեգրող ծնողը չարամտորեն խուսափում է ծնողական պարտականությունները կատարելուց կամ առկա են Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 130-րդ հոդվածով նախատեսված այլ հիմքեր, ապա այդ խուսափելու փաստը կամ Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 130-րդ հոդվածով նախա-

տեսված այլ հիմքերը հիմնավորող փաստերը Ոստիկանության, դատարանի, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և բարեկեցության նախարարության, մարզերում՝ մարզպետի աշխատակազմի, իսկ Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետարանի կամ համայնքի կողմից իրենց լիազորությունների շրջանակում արձանագրելուց և դրա մասին գրավոր մասնագիտական սոցիալական աշխատողին իրազեկելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, մասնագիտական սոցիալական աշխատողը դիմում է դատարան՝ որդեգրման վերացման հայցով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Լ. ՄԱԿՈՒՆՑ

25.09.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ